ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Սոֆիայում, Ազգային Ժողովը մարտի 1-ին, ընդունել է կառավարութիւնից առաջարկուած նոր օրինագիծ, որի զօրութեամբ Ռուսաց, Աղէքսանդր Նևսկու անունով կառուցած, եկեղեցին անցնում է բոլգարական պետական գանձարանին՝ իբր սեփականութիւն և վերակոչւում է իրենց առաջին լուսաւորիչների՝ Կիրիլի և Մեթոդիյի անունով։ Ապա, այդ օրինագիծն ընդունուելուց յետոյ, կառավարութիւնն առաջարկել է բոլգարական Սինոդին կարևոր միջոցներ ձեռք առնել, որպէս զի այսուհետև բոլգարական եկեղեցին ս. Միւռոնը չստանայ Ռուսաստանից, այլ ինքը պատրաստէ, քանի որ բոլգարական եկեղեցին ևս ինքնավար է։ Կառավարութիւնը մուծել է և մի այլ օրինագիծ, որով Յուլիանեան օրացոյցը փոխարինւում է Գրիգորեանով, պատճառաբանելով Բոլգարիայի և արևմտեան Եւրոպայի ունեցած վաճառականական և ելևմտական զանազան յարաբերութիւններով։ Պատճառաբանութեան մէջ մատնացոյց է անում և այն հանգամանքը, որ կառավարութիւնն ինքն զգում է այն դժուարութիւնները, որ այդ կարգադրութեամբ մեծ փոփոխութիւն պիտի առաջ գայ հոգևոր հաստատութիւնների վարչութեան մէջ, ուստի և ինքն ամեն ձեռնտուութիւն ցոյց կը տայ Բոլգար հոգևորականների մէջ այդ առթիւ տարակոյսներն ու երկիւղը վերացնելու համար։ Այդ կարգադրութիւնների հետևանքն այն կլինի, որ Բոլգարական ինքնավար և անկախ եկեղեցին այսուհետև ոչ մի կախումն չի ունենայ ուրիշ այլ եկեղեցուց և կդառնայ առանձին և անկախ եկեղեցի։

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ.

Ամերիկայում Հայանպաստ շարժումն աւելի և աւելի լայն խաւեր է գտնում հասարակաց ամեն շրջանում։ Վերջերս, ի նկատի ունենալով, այն ահռելի չափերը, որ Հայկական անվերապահ ջարդերն անարգել կատարում են Տաճիկ կառավարութեան ձեռքով, այնտեղ կազմուել է «Հայանպաստ Յանձնաժողով», որ մի դիմում է արել Ամերիկացիներին, ուր ի միջի այլոց կարդում ենք.—

«Մի յատուկ մասնաժողով քննութեան առաւ Լորդ Բրայսի այն առաջարկը, թէ անպաշտպան Հայերը,—կանայք, երեխաներ,

մանուկներ,—տարագրուած են Միջագետքի և Արաբիայի անապատներն ու աւազուտները, ջարդուած և կամ բռնի իսլամութեան են ենթարկուած»։

«Զգուշաւորութեամբ և լռիկ, որչափ հնար է այդ, ստուգութեան են ենթարկուած ականատեսների գրաւոր վկայութիւնները, որոնց անունները յայտնի են Մասնաժողովին, բայց որ հասկանալի պատճառներով հրապարակ հանել չի կարելի։ Այդ վկայութիւնները հարիւրաւոր էջեր են կազմում։ Վկաների անպայման արժանահաւատ լինելը և նոցա վկայութիւնների վճռականութիւնը, ոչ մի կասկած չեն թողնում և չափազանց համոզկեր փաստեր են առաջ բերում։ Հարց ու փորձի ենթարկուած վկաների շարքում կան Հայեր, Ամերիկացիներ, Եւրոպական զանազան ազգութիւններից անհատներ, ճանապարհորդներ, վաճառականներ, հասարակութեան ամեն խաւի և դիրքի անձեր, վարչական աստիճանաւորներ, զինուորականներ են են»։ Այդ վկայութիւնների և ոչ բառն ու միտքը կասկածի ենթարկել չէ կարելի։ Նոքա ամենքն ևս միաձայն վկայում են, որ Զմիւռնիայից մինչև Պարսկաստան, Սև ծովից մինչև Արաբիա Տաճիկ կառավարութեան ձեռքով ու ջանքերով ամէն հնարաւոր միջոցով ի գլուխ է հանւում ոչ-մուսուլման տարրի ընաջնջումը երկրի մէջ, որ թէ իւր չափերով և թէ իւր մոլեռանդութեան թափով շատ աւելի զօրեղ է և անցնում է Աբդիւլ-Համիդի թագաւորութեան օրերին տիրող արիւնաներկ վարչական եղանակը, որ տիրեց նորա ամբողջ կեանքի ընթացքում»։

Յանձնաժողովը ընտրել է մի մարմին հետևեալ անձերից,—ուսուցչապետ Դիտէն, Զարլզ Քրէյն, Քլիւլենդ Դօջ, Արթիւր Զէյմս, Սթիւարտ Դօջ, Զօն Մօթ, Ռաբբի Ուայզ, Ֆրէնկ Նօրթ, Ստէնլի Հուայթ. Զէյմս Բարթըն, Ուիլեամս Սլօն, որոնք ամեն տեսակ նուիրաբերութիւններ են ստանում, մանաւանդ դրամական, և հասցնում «Հայանպաստ Յանձնաժողովի» կենտրոնական մարմին։